Հայտարարվում է «Միասին ընդդեմ կոռուպցիայի» հակակոռուպցիոն սոցիալական գովազդի միջազգային երիտասարդական մրցույթ

ՀՀ գլխավոր դատախազությունը հանդիսանում է «Միասին ընդդեմ կոռուպցիայի» թեմայով սոցիալական հակակոռուպցիոն գովազդի միջազգային երիտասարդական մրցույթի համակազմակերպիչ:

Մրցույթն անցկացվում է Կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի գործունեության շրջանակներում ՝ կառուցողական միջազգային համագործակցության կազմակերպման և այդ բացասական սոցիալական երևույթի դեմ պայքարում համատեղ արդյունավետ միջոցներ ձեռնարկելու նպատակով:

Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ռուսաստանի և Տաջիկստանի 14-ից մինչև 35 տարեկան մասնակիցներին առաջարկվում է պաստառների և տեսանյութերի ձևաչափով պատրաստել «Միասին ընդդեմ կոռուպցիայի» թեմայով հակակոռուպցիոն սոցիալական գովազդ:

Ակնկալվում է, որ մրցութային աշխատանքներում կարտացոլվեն հասարակության գործունեության բոլոր ոլորտներում կոռուպցիայի դեմ պայքարի պետության ժամանակակից մեխանիզմները, ինչպես նաև այս ուղղությամբ միջազգային համագործակցության դերն ու նշանակությունը:

Նախատեսվում է, որ մրցույթի հաղթողների մրցանակաբաշխության հանդիսավոր արարողությունը կհամընկնի կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օրվան՝ դեկտեմբերի 9-ին:

Աշխատանքներն ընդունվում են www.anticorruption.life -ի պաշտոնական կայքում՝ 2018 թ. հուլիսի 2-ից մինչև հոկտեմբերի 19-ը:

Մրցույթի անցկացման կանոններին կարող եք ծանոթանալ այստեղ:

Հուսով ենք, որ այս յուրահատուկ ծրագիրը ոչ միայն երիտասարդության, այլև ավագ սերնդի ուշադրությունը կսևեռի կոռուպցիայի խնդրին և կծառայի կոռուպցիայի ցանկացած դրսևորման նկատմամբ հասարակության անհանդուրժողական վերաբերմունքի ձևաորմանն ու ամրապնդմանը:

Մրցույթի համակազմակերպիչներն են՝ Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության գլխավոր դատախազությունները,

Ղազախստանի Հանրապետության պետական ծառայության և կոռուպցիայի հակազդման գործակալությունը, Տաջիկստանի Հանրապետության պետական ֆինանսական վերահսկողության և կոռուպցիայի դեմ պայքարի գործակալությունը:

Հիշեցնենք, որ 2013թ. հոկտեմբերի 25-ին Կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի ստեղծման մասին համաձայնագիրը ստորագրվել է վեց պետությունների կողմից՝ Հայաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Ռուսաստան և Տաջիկստան: